ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հուլիսի 2021 թվականի N 205 - Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԱՅՐՈՒՄ ԵՎ ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 96-րդ հոդվածի 3-րդ մասը և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 1-ի N 1776- Ա հրամանը՝

որոշում եմ.

1. Հաստատել 2021 թվականի 3-րդ եռամսյակում Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Այրում և Կողբ համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության բնագավառը, ժամանակահատվածը և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 17-ի N ՍՊ/20.1/10461-20 հանձնարարականով ներկայացված՝ համապատասխան ոլորտի պետական լիազորված մարմնի և իրավական հսկողության բարձրագույն մարմնի համատեղ հրամաններով հաստատված Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող հսկողության հարցաշարով:
3. Անհրաժեշտության դեպքում հսկողության աշխատանքային խմբում ներգրավել մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների:
4. Մասնագիտական հսկողություն իրականացնելիս անհրաժեշտություն առաջանալու դեպքում աշխատանքային խմբում ներգրավել նաև մասնագիտական որակավորում ունեցող այլ անձանց (համաձայնությամբ):

5. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ համայնքում հսկողություն իրականացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, իրավական հսկողության բարձրագույն մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան կազմել արձանագրություն:

6. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ մինչև 2021 թվականի սեպտեմբերի 15-ը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացնել տվյալ եռամսյակում իրականացված հսկողության արդյունքում կազմված արձանագրությունները:

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

13.07.2021

X 

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ



ք. Իջևան
13 հուլիսի 2021թ.

Հավելված
ՀՀ Տավուշի մարզպետի
13 հուլիսի 2021 թվականի 205-Ա որոշման

2021 թվականին Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Այրում և Կողբ համայնքներում իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառները և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը

| Հ/հ | Համայնքի անվանումը | Իրականացվելիք հսկողության ժամանակահատվածը | Իրականացվելիք հսկողության բնագավառ | Հսկողություն իրականացնող պաշտոնատար անձիք | |
|---|---|---|---|---|---|
| | | | | Զբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ) | Անուն, ազգանուն |
| 1. | Այրում | հուլիսի 15-20 | ՏԻՄ լիազորություններ | խմբի ղեկավար,<br>խմբի անդամ | Նարեկ Ղուշչյան<br>Աղաբեկ Գալստյան, Հայկ Փաշինյան, Խանում Մարգարյան |
| | | | շրջակա միջավայրի պահպանություն, բուժսանիտարիա և անասնաբուժություն | խմբի անդամ | Արկադի Ամիրխանյան |
| | | | առևտուր, ծառայություններ և զբոսաշրջություն | խմբի անդամ | Գուրգեն Հարությունյան |
| | | | արտակարգ իրավիճակներ և պաշտպանություն | խմբի անդամ | Սամվել Սուքոյան |
| | | | ֆինանսներ | խմբի անդամ | Ժորա Խաչատրյան |
| | | | քաղաքաշինություն | խմբի անդամ | Միսակ Մելքումյան |
| | | | կոմունալ տնտեսություն | խմբի անդամ | Արմեն Ճաղարյան |
| | | | հողաշինություն և հողօգտագործում | խմբի անդամ | Համլետ Փիրումյան |
| | | | անձնակազմի կառավարում | խմբի անդամ | Թերեզա Սաֆարյան |
| | | | կրթություն, մշակույթ | խմբի անդամ | Համիկ Խաչատուրյան, Մարինե Խաչատրյան |
| | | | առողջապահություն | խմբի անդամ | Ռուբեն Տիգրանյան |
| | | | ֆիզիկական կուլտուրա, սպորտ և երիտասարդություն | խմբի անդամ | Արթուր Վանեսյան |
| | | | տրանսպորտ և ճանապարհաշինություն | խմբի անդամ | Արտակ Սարգսյան |
| | | | սոցիալական պաշտպանություն | խմբի անդամ | Հարություն Քոչարյան, Նարինե Ճաղարյան |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2. | Կողբ | հուլիսի 27 - 30 | ՏԻՄ լիազորություններ | Խմբի ղեկավար,<br>Խմբի անդամ | Նարեկ Ղուշչյան<br>Աղաբեկ Գալստյան, Հայկ Փաշինյան,<br>Խանում Մարգարյան |
| | | | շրջակա միջավայրի պահպանություն,<br>բուժսանիտարիա և անասնաբուժություն | Խմբի անդամ | Արկադի Ամիրխանյան |
| | | | առևտուր, ծառայություններ և զբոսաշրջություն | Խմբի անդամ | Գուրգեն Հարությունյան |
| | | | արտակարգ իրավիճակներ և պաշտպանություն | Խմբի անդամ | Սամվել Սուքոյան |
| | | | ֆինանսներ | Խմբի անդամ | Ժորա Խաչատրյան |
| | | | քաղաքաշինություն | Խմբի անդամ | Միսակ Մելքումյան |
| | | | կոմունալ տնտեսություն | Խմբի անդամ | Արմեն Ճաղարյան |
| | | | հողաշինություն և հողօգտագործում | Խմբի անդամ | Համլետ Փիրումյան |
| | | | անձնակազմի կառավարում | Խմբի անդամ | Թերեզա Սաֆարյան |
| | | | կրթություն, մշակույթ | Խմբի անդամ | Համիկ Խաչատուրյան, Մարինե Խաչատրյան |
| | | | առողջապահություն | Խմբի անդամ | Ռուբեն Տիգրանյան |
| | | | ֆիզիկական կուլտուրա, սպորտ և երիտասարդություն | Խմբի անդամ | Արթուր Վանեսյան |
| | | | տրանսպորտ և ճանապարհաշինություն | Խմբի անդամ | Արտակ Սարգսյան |
| | | | սոցիալական պաշտպանություն | Խմբի անդամ | Հարություն Քոչարյան, Նարինե Ճաղարյան |

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ